

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Թէ՛ սրբան անպաշտպանելի է թեմական դպրոցների կառավարչութեան ալժմեան եղանակը և թէ՛ ժողովրդական հոգաբարձութեան անձեռնհասութիւնը թեմական դպրոցների ուսումնական մասը կառավարելու գործում արդէն ինչ թշուառ ապագայ է պատրաստում նոյն ալք դպրոցների համար—դորա նորագոյն ապացոյցը տւեց Ներսիսեան Աղգալին՝ Հոգևոր Դպրոցը իւր մարտի 22-ի նիստում։ Ընտրում էին նոր տեսուչ հրաժարեցրած Նախկին տեսչի, տեղի։ Եւ ընտրեցին՝ մէկին, որի անունը մեղաւորում հէնց ալք ընտրութեան պատճառով չալտնի եղաւ։ Դա է պ. Սպէնդերեանցը։ Այսքանը պարտաւոր ենք համարում մեր ընթերցողներին ասել, որ նորան, ալք մեզ ամենքիս անչալտ մարդուն, ընտրողներն են եղել՝ պ. պ. Մելիք-Ղարաբոզեան, Աթաբէգեան և միւսները, թեմիս առաջնորդի հոգաբարձութեան Նախագահի հետ միասին։ Աւելացնենք և ալս, որ պ. Սպէնդերեանցի հետ քւէարկւելու վիճակը կրողներից զըլխաւորն եղել է պ. Սեդրակ Մանդինեան, ներկայ հալ մանկավարժներից ամենագլխաւորը։ Իսկ է, որ «Արձագանքը», բոլորովին վստահ աղբիւրից առաջ բերելով կատարած քւէարկութեան եղանակը, ուղեց ապացուցել, թէ ընտրածը պ. Մանդինեանն է և ոչ պ. Սպէնդերեանցը։ Մենք համակարծիք չենք։ Երբ արդէն պ. Մանդինեանցը ընտրած էր և համաձայնւել են նորից քւէարկութիւն կատարել, և դորա դէմ նիստում ոչ ոք չէ բողոքել և քւէարկութեանը մասնակցել են—ուրեմն վերջին քւէարկութիւնը միայն պարտադիր նշանակութիւն ունի և ոչ դորանից առաջ եղածը։ Ո՛չ, պ. Սպէնդերեանցն է ընտրածը։ Բայց մենք չենք հասկանում, թէ ինչպէս լրագիրները գտան, թէ նա ընտրած է տեսուչ Ներսիսեան Դպրոցի, քանի որ նա ընտրած է միայն թեկնածու տեսչու թեան և ոչ տեսուչ։ Տեսուչ կը լինի նա միայն ալն ժամանակ, երբ Ամենալն Հալոց Կաթողիկոսը հոգաբարձութեան ընտրութիւնը՝ չի հաստատի։ Ուրեմն, մեր աչքում ոչինչ կասկած չը կայ, թէ ընտրածը պ. Սպէնդե-

րեանցն է. կասկած չը կալ նաեւ, որ նա առաջմ միայն թեկնածու է տեսչութեան, մինչև ալը ընտրողութեան հաստատումը: Այդ դրութիւնը մենք անհնարին ենք գտնում և հաստատ համոզւած ենք, որ հոգաբարձական հաստատութիւնը իւր ալժմեան իրաւունքներով խախտուած չէ ալն հաստատութեան պատիւը, որը, ինչպէս մեր այս համարի առաջնորդողում ասում ենք, ամենամեծ գործն է, որ հաշուութիւնը կարողացել է կատարել ներկալ 19-երորդ դարում: Փորձը, երկարամեալ փորձը, ցոյց է տալիս, որ հոգաբարձութիւնները, իրանց ալժմեան կազմութեամբ և նշանակութեամբ, չեն հասկանում միջնակարգ դպրոցների նշանակութիւնը: Նոյն իսկ եթէ ընտրւած լինէր պ. Մանդինեանը, ալսինքն նա, որը ամենից շատ իրաւունք ունի դերադասելու բոլոր եղածներին,—նորա կախումը հոգաբարձութեան նման հաստատութիւնից պիտի գրեթէ իսպառ չէզոքացնէր նորա միւս դիտաւորութիւնները: Ձէ կարելի և չը պէտք է դնել տեսչին մի ալնպիսի դրութեան մէջ, որտեղ նա պիտի կախում ունենալ քէներից ալնպիսի անձերի, որոնք լաւ չեն վերաբերում դէպի դպրոցական գործը: Գիտենք և ալն, որ հոգաբարձութիւնից աւելի վատ կառավարչութիւն կարող է լինել և գիտենք, որ ալն վատթարագոյնի համար էլ մեղանում կարող են կուսակիցնիր գտնել: Մեզ մնում է հասարակաց կարծիքը պատրաստել մի լաւագոյն կառավարչական եղանակի համար և հրաւիրել դպրոցական գործին մօտ անձերի ուշադրութիւնը՝ չը խնայել իրանց խորհուրդները՝ ալն խնդրի մշակման գործում մեզ օգնելու համար:

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՍԻՆ ԳՐԲՐՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ներկալ ապրիլի 2-ին, Թիֆլիսի լատինական վարչութեան տան մեծ դահլիճում, կալացաւ լիչեալ Ընկերութեան տարեկան Ընդհանուր Ժողովը: Այդ ժողովը գրաւեց իւր վերալ բացառիկ ուշադրութիւն տեղիս մանաւանդ գրադիտական դասակարգի կողմից: Դորա գլխաւոր պատճառն ալն էր, որ ալն ընկերութիւնը հասած էր արդէն անկման դրութեան, մինչդեռ ամենքը զգում էին, որ դա մէկն է մեր սակաւ օգտակար հաստատութիւններից և որ նորան պահպանելը պատւի խնդիր է գրադէտ դասակարգի համար: Մինչև ալժմ, համարձակ կարելի է խոստովանել, ընկերութիւնը գտնւում էր ալնպիսի մարդկանց ձեռքին, որոնք ամենալն եռանդով չէին նւիրւած գործին. իսկ խմբագրական մասնաժողովի մէջ գտնւում էին ալնպիսի մարդիկ, որոնք դէպի հակական գրականութիւնը չուէին ոչ մի հետաքրքրութիւն և մինչև անգամ նոցա մէջ կար մէկը, որ հալերէն անգամ չը գիտէ: Ընկերութիւնը արդէն գոլութիւն ունի 10 տարի, որի ընթացքում հրատարակւած են 22 գիրք, արժողութեամբ ընդամենը 13 ր. 85 կոպէկի:

ասել է թէ ընկերութեան տարեկան գործունէութիւնը եղած է երկու գրքի հրատարակութիւն՝ արժողութեամբ 1 ր. 38 կոպ. Այդ նոյնն է, թէ մի գիրք 200—300 երեսանի։ Իսկ տարեկան մի-երկու հարիւր երեսանի գիրք հրատարակելու համար ծառայեցնել մի ընկերութեան անուն, 5—6 վարչական անդամներ, նոյնքան խմբադրական մասնաժողովի անգամներ, նիստեր, ընդհանուր ժողովներ, աղմուկ, լօղաձագրութիւն, հաշվետուութիւն, քարտուղարական պաշտօն և այլն և այլն—դա ծիծաղելի է։ Հարկաւոր էր ուրեմն մտածել ընկերութիւնը վերակենդանացնելու։ Դեռ անցեալ տարւանից սկսած էր մի լպտնի ագիտացիա լօգուտ ալդ գործի և, բնականաբար, շարժումը կենտրոնացած էր հպկական խմբադրութիւնների շուրջը։ Վարելի է համարձակ ասել, որ բարի նախանձը դրած էր բոլոր խմբադրութիւններին նոր անդամներ որոնելու, ալնպէս որ ժողովի օրը փոխանակ անցեալ տարւալ 13 անդամների, ներկալ էին 65 անդամ, գրեթէ բոլորը նոր մարդիկ, և որ ալդ օրը ընկերութեան անդամների թիւը հասնում էր մօտ 80-ի։

Ժողովի մէջ քննադատութեան գլխաւոր առարկան եղաւ նախկին վարչութեան գործունէութիւնը, որը բաւարար արդիւնքներ չէր ցոյց տւել և որը շատ կէտերով քննադատելի էր։ Վարչութեան կողմից տւած բացատրութիւններից իմացեց, որ նա աշխատել էր 1) տպագրել գրքեր, որոնք հարկաւոր լինելով հանդերձ, չէին հրատարակւիլ մասնաւոր հրատարակիչների ձեռքով, 2) որ վարչութիւնը ունեցել է իւր ուղղութիւնը գրքեր ընտրելու մէջ, որը, եթէ շատ էլ արդիւնաւէտ չէ եղած, բայց որը ունի իւր օգտակարութիւնը։ Ղա է՝ դասական գրքերի հրատարակումը, գլխաւորապէս հին գրականութիւնից՝ աւելի աժան գնով, քան Վենետիկի հրատարակութիւնները։ Որովհետեւ ժողովականների մի մեծ մասը բոլորովին հակառակ ուղղութիւն է ուզում մտցնել ընկերութեան հրատարակչական գործի մէջ, ուստի պարտաւոր ենք համարում վարչութիւնից տւած բացատրութիւններից վերը փշտակածները չարգանքով ընդունել, հետեւեալ անգամին թողնելով լպտնելու մեր կարծիքը, թէ ինչպիսի գործունէութեան եղանակով ընկերութիւնը կարող է ամենամեծ արդիւնք ցոյց տալ։

Ժողովը ամսի 2-ին կարողացաւ ընտրել վարչութեան նոր ատենապետ և նոր փոխ-ատենապետ։ Առաջինն է ալժմ պ. Փիլիպպոս Վարդանեան, երկրորդը՝ պ. Գրիգոր Տէր-Գրիգորեան։ Մնացին ընտրւելու վարչութեան միւս անդամները և խմբադրական մասնաժողովի անդամները։



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԵՍ

Կովկասեան արդիւնահանդէսի Կարգադրիչ Մասնաժողովը հրատարակել է մի լրացնող լաւելած, որի գլխաւոր կէտերը սորա են.—

1. Արդիւնահանդէսին մասնակցելու լաւատարութիւնները պէտք է հաստատած ձեով նախօրօք հաղորդէին Կարգադրիչ Մասնաժողովին, ըստ կարելոյն վաղ, որ Մասնաժողովը կարողանայ ժամանակին հոգալ առարկաների համար հարկաւոր տեղեր պատրաստելու:

2. Առարկաները կարող են ուղղուել Թիֆլիս, Մասնաժողովի անունով, որը իւր գործակատարի միջոցով կը հոգալ նոցա ստանալու թէ երկաթուղու կալարանից, թէ ապրանք փոխադրող գործակալութիւններից և հասցնելու մինչև արդիւնահանդէսի շինութիւնը: Հանդիսաբերներից սակաւ ապահովածները, եթէ ցանկանան, կարող են իրանց ցուցառարկաները ներկայացնել տեղական գլխաւոր գործակալներին, որոնց անունները չափով կը լինին գաւառական վարչութիւններում և որոնք կը հոգան ուղարկելու առարկաները Թիֆլիս, Կարգադրիչ Մասնաժողովի հաշով:

3. Առհասարակ արդիւնահանդէսի համար նշանակած բոլոր առարկաները պէտք է ներկայացուած լինին Մասնաժողովին՝ աչս կամ աչն միջոցով՝ ոչ վաղ քան օգոստոսի 1-ը և ոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը, հետեւեալ բացառութիւններով.

ա) Ձմեռաւ պտուղները (տանձ, խնձոր և ալլն) և ուշ հասնող բանջարանոցի հնդեղէնները և բոստանների արդիւնքները կարող են ներկայացնել և արդիւնահանդէսը բացելուց լետոյ, բաց ոչ ուշ քան հոկտեմբերի 5-ը: Խացիկներով բոսները կամ աչն բոսները, որոնք պէտք է տնկին հողի մէջ (ալը նպատակով նշանակած է պարարտացրած և բրած հողի առանձին բաժին), կարող են ներկայացնել ամեն ժամանակ, ուրեմն ամբողջ գարնան և ամառաւ ընթացքում, իսկ արդիւնահանդէսը սկսելուց լետոյ՝ մինչև հոկտեմբերի 5-ը:

բ) Աչն գինիները, որոնք հանդիսաբերը կը ցանկանար նախ քան փորձաքնները ենթարկել լուծումի, պէտք է ներկայացւին ըստ կարելոյն վաղօրօք, օրինակ՝ երկու ամիս արդիւնահանդէսը բացելուց առաջ:

գ) Շերամ, կօկօններ և սերմը թիթեռներով հանդերձ (տոպրակներով մէջ)—արդիւնահանդէսը բացելուց մի ամիս առաջ:

դ) Սարքած երկրագործական գործիքները—մինչև սեպտեմբերի 8-ը:

4. Յուցակագրերում պէտք է չափուած լինի, թէ ինչ գնով կարող են վաճառել ցուցառարկաները: Բացի դորանից շատ ցանկալի է, որ ցուցակագրերում աւելացրած լինին ամբողջ մի շրջանի կամ տնտեսութեան վերաբերեալ տնտեսաւ լրացակաւորական տեղեկութիւններ ի միջի ալլոց և հետեւեալ բովանդակութեան.—դանադան արդիւնքների տեսակը (խաղողի, հացաբոլսերի, գինու և ալլն), աչն ամիս աչն վարուցանքսի դեսեալնատեղի:



հունձը, արդիւնքների տեղական դները (տէրունական կամ տեղական չափերով), ալս կամ ալն արդիւնագործութեան մեծութիւնը (տարեկան դրամաշրջանը, աշխատողների և արհեստաւորների թիւը, տնտեսութեան հողածաւալը, արդիւնքների քանակութիւնը և ալն), ալս կամ ալն արդիւնագործութեան ժամանակը, արդիւնքները վաճառելու տեղը և կաղմակերպութիւնը, գործիքները և ալն:

Մանթութիւն, Մանաժողովը խնդրում է խնամք տանել հաղորդած տեղեկութիւններէ ճշգրտութեան մասին, թողնելով հաղորդողի վերայ նոցա լիակատարութեան չափը:

5. Գործարանական արդիւնագործութեան ներկայացուցիչները իրանց բռնած տեղի համար վճարում են—VIII բաժնում՝ իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 2 ռուբլի ծածկած (և Մանաժողովի ծախքով շինած) տեղերի համար և 1 ռուբլի՝ բաց օդում: Միւս բաժիններում, նոյնպէս և առանձին դարպասներում, նախած տեղին, 2-ից մինչև 10 ռուբլի քառակուսի սաժէնից:

6. Ալն անձերը կամ տները, որոնք զանազան բաժինների կամ խումբերի վերաբերեալ առարկաներ են արդիւնագործում, կարող են իրանց բոլոր արդիւնքները միատեղ ներկայացնել ալն պալմանով, որ նոքա ալք նպատակի համար իրանք իրանց հաշուով շինեն առանձին դարպասներ, վճարելով բռնած տեղի համար Մանաժողովի հաւեցողութեան համեմատ: Միևնոյն ժամանակ հանդիսաբերի արդիւնագործած ալք առարկաները պէտք է դրած լինին համապատասխան բաժիններում և խմբերում:

7. Նոքա, որոնք իրանց առարկաները լաւ ցույց տալու համար կը ցանկանան ունենալ չարմարեցրած պահարաններ, պէտք է շինել տան իրանց հաշուով, բայց բաժնի կարգադրիչի ցուցմունքներով և առաջնորդութիւնով:

8. Ալն հանդիսաբերները, որոնք կը ցանկանան օգտուել երկաթուղով կամ շոգենաւով ուղարկելու իրանց ցուցառարկաները, պէտք է Մանաժողովին դորա մասին չափաբարեն, նշանակելով ուղարկողի անունը, աղջանունը կամ տունը և թիֆլիս ուղարկելիք առարկաների տեսակները, որ Մանաժողովը տալ հարկաւոր հաւաստիաթուղթ՝ ներկայացնելու երկաթուղու կայարանին կամ շոգենաւական գործակալութեան:

Ալք ընդհանուր ցուցումներից անկախ՝ կարգադրիչ Մանաժողովը հարկաւոր է համարում առաջարկել հետեւեալ բացառութիւնները.

Ա. ու ջ ի ն՝ բ ա ժ ն ի վերաբերմամբ (երկրագործական արդիւնքների) ցանկալի է, որ արդիւնահանդէսը ներկայացնէր երկրագործութեան իսկական վիճակը, ալսինքն, որ հանդէս բերած առարկաների քանակութիւնից կարելի լինէր կանոնաւոր գաղափար կաղմել՝ թէ երկրի ինչ մասում ինչ մշակութիւն և արդիւնաբերումն է գերակշռում, ինչ տեղակ հացաբուսեր և

ուրիշ բույսեր են աւելի տարածւած, և որոնք են միայն մի քանի տեղերում արդիւնաբերւում: Հանդիսաբերներն պէտք է խմանան, որ երկրագործական արդիւնքները պէտք է իսկապէս համապատասխանեն վաճառանոցի նմուշներին և ոչ թէ հատիկ-հատիկ ընտրւած լինին՝ չտակապէս արդիւնահանդէսի համար: Միակ բացառութիւնը, որ կարելի է թող տալ, դա սերմերը երկու տեսակի բաժանելն է ցանելու և վաճառելու համար՝ Առաջին բաժնում թէև բոլոր առարկաները պէտք է բաժանւին խմբերի և իւրաքանչիւր խմբում պէտք է կարգւին համեմատ տեսակին, յեղին, նուն-պէս ջրարբի և անջրղի տեղերում բուսցրած լինելուն, բայց թող են տըր-ւելու և առանձին տնտեսութեան արդիւնքների միախմբւած ժողովածուներ՝ ալն պալմանով, որ հանդիսաբերը ալք տեսակ ժողովածուն կազմի իւր հաշւով, կարգադրիչի ցուցումի համեմատ:

Երկրորդ բաժնի (ալգեգործական և բանջարանոցական) վերաբերմամբ ցանկալի է, որ առարկաների համախմբումը կատարւի ալնպէս, ինչպէս սահմանւած է ալք բաժնի մանրամասն ծրագրում: 1) Ալն անձերը և տները, որոնք ցանկանում են արդիւնահանդէսին իրանց գործով մասնակից լինելու, կարող են պահանջել ալգեգործական բաժնում մինչև 25 քառակուսի սաժէն տեղ ցանելու, զանազան բույսեր տնկելու: Ալք նպատակը իրագործելու համար հանդիսաբերները պէտք է իրանց վերալ առնեն հողի մշակութեան և բույսերի խնամելու ծախքերը, իսկ ջուրը կը ստանան Մասնաժողովից ձրի, որչափ հարկատու լինի:

Երրորդ բաժնի (գինեգործութեան) վերաբերմամբ պէտք է աչքի առաջ ունենալ՝ ընդունւած գինիները հետեւեալ տիպերի բաժանելու:

I. Սպիրտակ գինիներ. ա) սովորական սեղանի գինիներ, բ) նուրբ սեղանի գինիներ. վերջիններս նունպէս բաժանւում են նոր և կարգին պահւած գինիներ, պատրաստ շիշեր ածելու:

II. Կարմիր գինիներ. ա) սովորական սեղանի գինիներ, բ) նուրբ սեղանի գինիներ (որոնք նունպէս են բաժանւում, ինչպէս և սպիրտակ գինիները), գ) ծանր գինիներ՝ կտրելու (coupage) համար գործածուող:

III. Դեսերտի գինիներ. ա) լիկեօրի և բ) քաղցր գինիներ:

IV. Ֆիշացող գինիներ, չամպանեալ:

V. Կօնեակ և օղի:

Ցանկալի է, որ առանձին ուշք դարձրւած լինի սովորական սեղանի գինիների հանդէսի վերալ, որովհետև Կովկասի գինեգործութեան գլխաւոր ոլժը կազմում է գինիների ալս դասը: Հանդիսաբերները պէտք է որոշակի մատնացուց անեն, թէ հանդէս բերուող գինիները վերալիւած խմբերից որին է չատկացնւում:

1) Աւելորդ ենք համարում առաջ բերել այդ մասնաւոր ծրագրերը, որ բոլորած է մեր ընթերցողին արդէն յայտնի ծրագրից («Մուրճ» № 3):

Իւրաքանչիւր գինին առանձնակի, որչափ կարելին է, պէտք է ունենալ հետը իւր ծագման համառօտ նկարագրութիւնը, որի մէջ նշանակւած լինին՝ տեղը, որ թանոցը (ջրարբի և անջրդի), գինու հասակը, խաղողի տեսակները, որից պատրաստւած է գինին (եթէ գինին որոշ տեսակ խաղողից չէ ստացել, ալն ժամանակ բաւական է վիշել, որ նա պատրաստւել է լալտնիստեղում բուսնող ալս ինչ և ալն ինչ տեսակներից), գինը՝ հաշւած սալի, սապալնէի, վեգրօլի կամ շիշի վերայ, Նթէ հանդիսաբերը՝ միևնոյն ժամանակ և արդիւնագործող-վաճառող է՝ պէտք է ցոյց տալ միջին տարեկան արդիւնահանութիւնը և նշանակած գնով վաճառելի արդիւնքի քանակութիւնը: Քննիչ չանձնաժողովը իրաւունք ունի գինիները խմելից խումբ տեղափոխել, եթէ հանդիսաբերը սխալ է դատարկարդել իւր գինիները:

Համախմբւած գինիների ժողովածուների գնահատութիւնը և պարգևատրւիւթիւնը պէտք է իւրաքանչիւր հանդիսաբերի համար առանձին կատարւի:

Հանդէս բերւած արդիւնքների արժանաւորութիւնը հանգամանօրէն ցոյց տալու նպատակով ալցեւուների համար շինելու է առանձին փորձասենեակ, որտեղ իւրաքանչիւր ցանկացող կարող է փորձել գինիները՝ նոցա ճաշակելով: Գինիների փորձը կատարելու է բաժնի կարգադրիչների մէկի հսկողութեան տակ և հանդիսաբերների կամ նոցա հաւատարմատարների ներկայութիւնով: Հանդիսաբերներից իւրաքանչիւրը իրաւունք ունի ցանկացողների համար փորձելու տալ իւր գինիները, ցանկալի է որ կովկասում արդիւնաբերող բոլոր գինիների նմուշները լինին փորձասենեակում:

Տակառիկներով գինիներ չեն ընդունւում փորձասենեակում:

Ըստ հանդիսաբերի ցանկութեան, գինիները անօթով կարող են փորձի համար վաճառւել. բաց Մասնաժողովի սահմանած կանոնների համեմատ, գինիների վաճառումից դուրս փողերի մի լալտնի տոկոսը պէտք է վերցնել՝ փորձասենեակ շինելու ծախքերը ծածկելու նպատակով:

Գինիները պէտք է ներկայացւին արդիւնահանդէսը սկսելուց երկու ամիս առաջ և ոչ պակաս քան 5 շիշ քանակութիւնով. իսկ փորձասենեակի համար ոչ աւելի քան 10 շիշ: Դրոշմների վերայ պէտք է նշանակւած լինին հանդիսաբերի կամ առևտրական տան հասցէն, գինը և հունձի տարին:

Չորրորդ բաժնի (չերամապահութեան և մեղուապահութեան) վերաբերմամբ պէտք է աչքի առաջ ունենալ, որ գործիքներ, նկարներ, մակարդակներ, հաւաքածուներ և ալն կարող են հանդէս բերել, բացի կովկասեան և անդրկասպեան հանդիսաբերներից, նաև ռուս և ալպզգի տները:

Հինգերորդ բաժնի (տաւարապահութեան և կաթնատնտեսութեան արդիւնքների) վերաբերմամբ ցանկալի է ցուցահանդէսին ներկայացնել բոլոր տեղական պանիրների նմուշները, ալն է՝ օսի պանիր, թուշի,

աջարական, կանաչ (Ախալքալաքի գաւառում), թեւ, ջիւ, բղուղի կամ քիւփի (մանրած և կանաչի հետ խառնած, ինչպէս Դարալագեազում պատրաստում է և կամ աղաջրի մէջ), մօթալի, թալիշի, բազու-ղուբալական (աներես պանիր), շիխլի, թան, չերքեզա-արմաւիրական (ծխահար և միւս տեսակ), զաղախի (հիւսապին կովկասից), քիւրի (Դաղստանից): Նոյնպէս քեֆիր, կաթնալին օղի և չոր սեր: Տնալին կենդանիների բրդի հանդիսաբերները պէտք է նմուշները ներկայացնեն ամբողջ գեղմնրով, վաճառելի ձևով և դանազան հասակի ու սեռի կենդանիներին:

Վ ե ց եր ո ր դ բ ա ժ ն ի (անտառապահական) վերաբերմամբ ցանկալի է, որ բացի ալն առարկաներից, որ ցոյց են տաւծ 6 խմբերում, ներկայացնեն փալտի փոխ-արդիւնքները. սօրֆ, եղեգն, իսլի և ալլն:

Ե օ թ ն եր ո ր դ բ ա ժ ն ի (ձկնապահական) վերաբերմամբ: Գործիքներ անուշով պէտք է հասկանալ որսալու գործիքները և անօթները, ինչպէս են՝ ուռկաններ, ցանցեր, թակարդներ և ալլն. դանակներ, կացիններ և ալլն. նաւակներ և ալլն կաղապարակերտներով կամ բնական մեծութիւնով:

Ու թ ն եր ո ր դ բ ա ժ ն ի (գեղջկարհատի և արհեստի) վերաբերմամբ: Ծրագրի մէջ չալտնաւծ ցանկութիւնը—տեսնել արհեստաւորներին և գեղջկարհատաւորներին իրանց գործիքներով բանելիս ի ցոյց հասարակութեան—պէտք է ալն կերպ հասկանալ, որ արդիւնահանդէսին կարող են դալ և արհեստով պարապել ինչ թէ բոլոր հանդիսաբերները, ալ մի քանի նշանաւոր վարպետներ, ամեն մի նահանգի իւրաքանչիւր արհեստից մի մարդ: Եթէ գործը պահանջում է բացի վարպետից և օգնական, ի հարկէ վերջինիս ներկայութիւնը անհրաժեշտ է: Մեծ կարիք զգացած դէպքում, Մասնաժողովը կարող է գեղջկարհատաւորներին նպաստել թիֆլիս գալու և տուն դառնալու: Ընտրւած վարպետները, գործելով արդիւնահանդէսում, կարող են վաճառ հանել ոչ միայն իրանց կերտածքները, ալ և բոլոր ալն համարհետաւորների, որոնք կը հաւատան առաջիններին իրանց ապրանքները: Մասնաժողովը չուս ունի, որ վարպետները իրանց կերտածքների վաճառումից գույացած շահով կարողանան ծածկել իրանց գնալ-գալու և թիֆլիսում ապրելու ծախքերը: Ցանկալի է տեսնել արդիւնահանդէսում գեղջկարհատաւորների նա մանաւանդ հետեւեալ խմբերից. 74, 76, 77, 78, 79, 80, 85, 86, 88 և 90 (տես «Մուրճ»-ի № 3. երես 529):

Ի ն ն եր ո ր դ բ ա ժ ն ի (մանկավարժական-արհեստագիտական) վերաբերմամբ—ցանկալի է, որ արհեստաւորական դպրոցների ձեռագործները ներկայացնեն ամենալաւերը և դասատուն-դասատուն. ալնպէս որ կարելի լինի պարզ գաղափար ստանալ մի չալտնի ժամանակամիջոցում սովորեցրածի չաղողութեան մասին: Նոյնպէս օգտակար է ալն գործիքների ներ-

կալացները, որոնց միջոցով և շնորհով պատրաստել են հանդէս բերած առարկաները:

Դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը ներկալ համարում տպուղ պ. Լևոն Սարգսեանցի գրածքի վերալ, որտեղ, ի միջի ալլոց, նրես 580—581, ակնարկում է եկեղեցապատկան և վանքապատկան կալածների անխնամ դրութիւնը: Մենք գտնում ենք, որ արդէն ժամանակ է ակլ խնդիրը օրակարգ խնդիրների շարքը անցկացնել և նորանով լրջօրէն զբաղել: «Մուրճ»-ը ակլ խնդրով կը զբաղւի: